«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

——

2025 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2-2.4 կետեր.

«2.2. Նոր բնակության վայրում հաշվառվելու նպատակով անձը կարող է ներկայացնել համապատասխան դիմումը՝ (վավեր թվային էլեկտրոնային ստորագրությամբ) մուտքագրելով առցանց եղանակով՝ mcs-registr.am Հարթակի միջոցով՝ անցնելով խիստ նույնականացում, կամ դիմումն առձեռն ներկայացնելով լիազոր մարմին։

Հարթակը կազմված է վեբ հասանելիություն ունեցող mcs-registr.am կայքից, և սահմանափակ հասանելիություն ունեցող գործերի կառավարման համակարգից, որը նախատեսված է ստացված դիմումների վերաբերյալ վարչական վարույթ իրականացնելու և վարչական վարույթում ներգրավված պետական մարմինների միջև փոխգործակցությունն ապահովելու համար։

Դիմումը համարվում է ընդունված համապատասխան դիմումի էջում

«Հաստատել» կոճակը սեղմելու պահից։

2.3. Հարթակ մուտք գործելիս անձը (մինչև 16 տարեկան երեխայի համար՝ օրինական ներկայացուցիչը, որը պետք է ներկայացնի նաև ազգակցական կապը հավաստող փաստաթուղթ) կարող է տրամադրել իր ծանուցման հեռախոսահամարն ու էլեկտրոնային փոստի հասցեն, որոնք կմշակվեն լիազորված մարմնի կողմից և այն ծանուցումներ կուղարկի համապատասխան անձին՝ իր կողմից ներկայացված դիմումի կարգավիճակի, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերը համալրելու վերաբերյալ։ Էլեկտրոնային փոստի հասցե լրացված լինելու և ծանուցումներն այդ հասցեով ստանալու վերաբերյալ դիմումատուի համաձայնության առկայության դեպքում ծանուցումներն ուղարկվում են բջջային հեռախոսին և (կամ) դիմումատուի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին, որից հետո դիմումատուն համարվում է պատշաճ ծանուցված։ Հեռախոսահամարն ու էլեկտրոնային փոստի հասցեն նշված չլինելու դեպքում ծանուցումները կուղարկվեն թղթային։

2.4. Հարթակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն և 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշումներով սահմանված կարգով պետք է փոխգործելի լինի և հնարավորություն ունենա ստանալ տեղեկատվություն ստորև նշված պետական տվյալների շտեմարաններից.

- Բնակչության պետական ռեգիստրից (հանրային ծառայության համարանիշ, անուն, ազգանուն, հաշվառման հասցե, անձնագրային տվյալներ),
- Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տվյալների շտեմարանից (ամուսնական կարգավիճակ, ամուսնու հանրային ծառայության համարանիշ, ամուսնու անձնագրային տվյալներ, երեխաների անուն և ազգանուն, երեխաների հանրային ծառայության համարանիշ, երեխաների անձը հաստատող փաստաթղթի տվյալներ),
- Կադաստրի Կոմիտեի հասցեների ռեգիստրից (հասցեները հստակեցնելու նպատակով),
- Պաշտպանության նախարարությունից (զինվորական հաշվառման առկայությունը ստուգելու նպատակով),
- Գանձապետարանից (պետական տուրքի վճարված լինելը հավաստելու համար)։».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.1-ին կետ.

«19.1. Դիմումը լիազորված անձի կողմից ներկայացնելիս ներկայացուցիչը համապատասխան դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կարող է ներկայացնել բացառապես առձեռն։».

3) 20.1-ին կետի առաջին պարբերությունում «ուղարկվում փաստացի բնակվելու փաստը հավաստող կամ հերքող տեղեկատվություն (տեղեկանք կամ գրություն)» բառերից հետո լրացնել «կամ նշված տեղեկատվությունը մուտքագրվում է mcs-registr.am Հարթակ՝ կիրառելով անձի խիստ նույնականացման գործիքակազմը։

Հարթակի գործերի կառավարման համակարգ օգտատերերի մուտքը կարող է իրականացվել միայն խիստ նույնականացման գործիքակազմի կիրառմամբ։» բառերը.

4) 20.1-ին կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«Փաստացի բնակվելու փաստը հավաստող տեղեկատվությունը (տեղեկանքը կամ գրությունը) Հարթակ մուտքագրվելուց հետո լիազոր մարմինը զինապարտ քաղաքացու հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով տրամադրում է զինվորական հաշվառումն իրականացնող զինկոմիսարիատ։ Զինկոմիսարիատը տեղեկատվությունը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում mcs-registr.am հարթակ է վերբեռնում զինվորական հաշվառման վերաբերյալ նշումը, որից հետո լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառվող անձի անհատական տվյալները մուտքագրում է բնակչության պետական ռեգիստր՝ ծանուցելով այդ մասին դիմումատուին։ Փաստացի բնակվելու փաստը հերքող տեղեկատվություն (տեղեկանք կամ գրություն) ստանալուց կամ նշված տեղեկատվությունը Հարթակ մուտքագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղական ռեգիստրը գրավոր մերժում է դիմումատուին՝ մերժման վերաբերյալ ծանուցումը ուղարկելով դիմումատուին։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

ք. Երևան